ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

6.05.2020
345-43

ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
Նախագահ Տաթևիկ Ռևազյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի տիկին Ռևազյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Անտիֆեյք.ամ» կայքի լրագրող Սոնա Ամիրյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Սոնա Ամիրյանը սույն թվականի ապրիլի 14-ին ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտե տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ Կոմիտեի նախագահի աշխատավարձի և պարգևավճարների մասին: Տեղեկություն ստանալու հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն 20.04.2020-ին պատասխան գրությամբ մերժել է տրամադրել պահանջված տեղեկությունը՝ որպես հիմք ներկայացնելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքը:

Մերժումը սակայն հիմնավոր չէ, քանի որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը կամ փոխանցումը, չի սահմանում տեղեկություն տնօրինող մարմնի կողմից անձնական տվյալներ տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու կարգը և պայմանները, ինչպես նաև չի սահմանում այս կամ այն անձնական տվյալների՝ գաղտնիք լինելու կարգավիճակը: Սա ամրագրված է նաև Ինֆորմացիայի ազատության կենտրոնի դիմումի առիթով Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կայացրած N-006/01/19 որոշմամբ: Միաժամանակ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ-ը սահմանում է որպես «անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)»:

Ուստի պահանջվող տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել՝ տեղեկության զուտ անձնական տվյալ լինելու հանգամանքով, այլ պետք է մերժվի «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հիմքերով և նույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով: Միաժամանակ

հիշեցնում ենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

Ուստի, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները՝

1. ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահը իր պաշտոնավարման ամբողջ ժամանակահատվածում քանի՞ անգամ, ե՞րբ և որքա՞ն է պարգևատրվել (տրամադրել պարգևատրումների քանակը, ժամանակահատվածը և պարգևավճարի չափը):

2. ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահը իր պաշտոնավարման ամբողջ ժամանակահատվածում որքա՞ն աշխատավարձ է ստացել (տրամադրել յուրաքանչյուր տարվանը առանձին-առանձին, իսկ 2020թ.-ի աշխատավարձը՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով, ինչպես նաև ներառյալ այս ժամանակահատվածում ՀՀ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի ստացած մայրության նպաստի չափը)։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան